
Արձանագրութիւնը գտնուում է Առաւաձածնի սրբատաշ քարերով նորոգած արեւմտա-հարաւային պատի վերայ, լուսամուտի երկու թռչնապատկերների տակ։ Մենք կարծում ենք այստեղ գտնուած բոլոր արձանագրութիւնները՝ ժամանակի կողմից տարբեր ծագումով, փորագրուած են այս նորոգութեան ժամանակ (պատկ. 136, ձախ)։ Մի ուրիշ արձանագրութիւն, աւելի համառօտ, հաստատում է նորոգութիւնը մի տարով յետոյ՝

Ի թուիս ՉԻ (= 1258) նորոգեցաւ | սբ. Աճածինս։

Նորոգութեան չրջանին են պատկանում Լուբիկի (Ցաւել. Ա. 112), Պատրիկի (Ցաւել. Ա. 112ա.) եւ Ագիպի (Ցաւել. Ա. 112բ.) արձանագրութիւնները. առաջինը կ. դահեկան է տալիս և երեք օր ժամ սառնում, մէկը իւր, միւսը Շերեչահի եւ երրորդը Երեմի համար. Պատրիկը տալիս է 20 դահեկան եւ տարին մի օր ժամ սառնում. իսկ Ագիպը՝ «անեալ ի տան Խութլու խաթունին եւ Պռաւշոյ» նոյնպէս քսան դահեկան է տալիս եւ մի ժամ սառնում։ Դէպի Առաւաձածնի վերին քարայրը տանող դրան ճակատին է Մխիթար քահանայի արձանագրութիւնը, որ կարող է Մխիթար Այրիվանեցին լինել աւելի երիտասարդ հասակում (Ցաւել. Ա. 113), իսկ փոքրիկ լուսամուտի գլխին՝ վերեւ յիշուած արձանագրութիւններից բարձր՝ Շաքար բէգի, որի մէջ յիշուած է վանքի «Գեղարդ» անուանակոչութիւնը (Ցաւել. Ա. 114)։

Մենք արդէն մի անգամ յիշել ենք, որ վանքի շինութիւնների մէջ հնագոյն մնացորդը Առաւաձածնի քարայրն է, ժայռի երեսին փորագրած մի քանի խաչերով, որոնցից մէկը ՈԺԳ (= 1164) թուականն ունէր (պատկ. 136). մեր խօսքը վերաբերում է միայն ներքեւի չարքին, որոնցից աջակողմեան երեքն իսպառ փչացած, իսկ մնացած երեքը պարզ, առանց ճոխ կամ սեթեւեթ քանդակների, որ տիրապետել է սկսում ԺԳ. դարում։ Խաչերի պարզ ձեւերն իսկ տպաւորիչ են եւ հետաքրքրական նրանց զարգացման պատմութեան նկատմամբ, որ համընթաց են հայ ճարտարապետական արուեստի զարգացման։ Ինչպէս դասական չրջանի ճարտարապետութեան մէջ, ներառեալ եւ Բագրատունեաց վերածնութեան չրջանը, արուեստի կենդանութեան եւ ճաշակի յայտարարը նորա ազնիւ գծերն են ամբողջութեան ձեւակերպութեամբ, այդպէս եւ խաչի արուեստը իւր զարգացման հնագոյն չրջաններում պարզ է, առանց քանդակագործական զարդարանքների ճոխութեան եւ երկրաչափական ձեւերի պէսպիսութեամբ եւ այլ զարդերով տպաւորիչ դարձնելու ձգտման, որ սկսում է քաղաքացիութիւն ստանալ ԺԲ. դարի վերջերից։ Մեր ասածին ապացոյց հէնց մեր երեք խաչերից բարձր հաստատուած ճոխ քանդակներով խաչքարը հայր Դրիգորի ժամանակից՝ «խաչս բարեխաւս հաւր Դրիգոր եւ ծնողացն». հայր Դրիգորին յիշատակուած տեսանք ՈՒՉ եւ ՈԼ թուերի արձանագրութիւնների մէջ, կարելի է համեմատել նաեւ Տիմոթի եւ Մխիթարի խաչարձանի հետ ՈԿԲ թուականից (պատկ. 6)(*)։ Մնացած սրբատաշ քարով պատը, կտուրով, ինչպէս եւ պատի մէջ հաստատուած խաչքարերը, բոլորակ լուսամուտի կողքերի սվաստիկաները, ճառագայթաւոր աստղը եւ եռանկիւնին թռչուններով, յատկա-



Պատկեր 152.

նականութեան սիմվոլիկ նշաններ, նորոգութեան չրջանից են, որի արձանագրութիւնն էլ տեսանք ՉՉ (= 1257) թուականով։

Նորոգութեան չրջանի ամենից հետաքրքրական մասը որմանկարչութիւնն էր, տարաբաղդաբար միայն փոքր մասով առաստաղի վերայ մնացած, այն էլ խաղխզուած եւ կեղտոտուած վիճակում. որմանկարների հին չերտը տակն էր, երփներանգ, որոնց մասին ոչինչ ասել չենք կարող, իսկ երեսի չերտը սևա-

(*) Խաղբակեանք, Ա. 25։